ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

18 սեպտեմբերի 2025թ. թիվ 1028

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱԳԵՏ Ա. ՄԱԼՈՅԱՆԻՆ ՍԵՄԻՆԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՖՐԱՏ-ի գրասենյակի տնօրենի 2025 թվականի հուլիսի 28-ի հրավերը, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 30.07.2025թ. թիվ 05/112.5/06406-2025 գրությունը և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ուղարկված 06.08.2025թ. թիվ 1101/43046-25 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Անի Մալոյանին 2025 թվականի սեպտեմբերի 22-ից 27-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Ֆրանսիայի Հանրապետությունում «Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակներում կազմակերպվող սեմինարին:

2. Ընդունել ի գիտություն, որ սեմինարին մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի հաշվին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

9/18/2025

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 18
ք.Վանաձոր